«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Զյունիկ Ասլանյան

ՄԱՐԶ Արագածոտն

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ծիլքարի Խոսրով Ասլանյանի անվան միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն……..……2

Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը……....3

Եզրակացություն……...16

Օգտագործված գրականություն……17

Ներածություն

Սովորողների խոսքի հարստացման և զարգացման գործընթացի հիմքում ընկած են ուսումնական աշխատանքը ստեղծագործական դարձնող հնարներ:

Դեռ նախադպրոցական հասակից նրանց պետք է սովորել աշխատել ինքնուրույն: Հայոց լեզվի ուսուցման գործընթացի կարևոր խնդիրներից մեկը սովորողների խոսքի զարգացումն է:

Սովորողների խոսքի հարստացման և զարգացման գործընթացը պետք է կատարվի մայրենիի դասընթացի ժամանակ: Այս մասին հոգեբան Ա. Ա Լեոնտևը գրել է.

« Մեր կրթական համակարգի հիմնական նպատակներից մեկը հասարակության համար պիտանի, ինքնուրույն, ստեղծագործող, որոշումներ կայացնող, ներդաշնակորեն հաղորդակցվող, ճիշտ կողմնորոշվող անհատի դաստիարակումն է: Այս նպատակին հասնելու համար դասարաններում պետք է ապահովել այնպիսի միջավայր, ուր հնարավոր լինի զարգացնել սովորողների ինքնուրույն մտածողությունը » :

Որպեսզի մարդը լիարժեքորեն հաղորդակցվի պետք է սկզբունքորեն տիրապետի կարողությունների մի ամբողջ շարքի.

1. կարողանա արագորեն և ճշտությամբ կողմնորոշվել հաղորդակցման պայմաններում.

2. կարողանա իր խոսքը ճիշտ պլանավորել.

3. ունենա ճիշտ ստեղծագործելու ունակություն:

Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Այսօր դպրոցի խնդիրը ոչ միայն կրթության բարձր մակարդակի որակի ապահովումն է, այլև սովորողների մտածողության բազմակողմանի զարգացումը, նրանց գիտելիքներն ինքնուրույն լրացնելու, ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներից օգտվելու, կյանքում դրանք տեղին և ճիշտ օգտագործելու կարողությունների և հմտությունների ձևավորումը:

Ա. Ի. Սավեսկովն ասել է, որ ուսուցումը պետք է լինի պրոբլեմային: Այն պետք է պարունակի ինքնուրույն գործունեության տարրեր, կրի անհատական ստեղծագործական բնույթի որոնումների կնիքը: Նման իրավիճակներում կաշխուժանան երեխաների շփումներն ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ:

Գաղտնիք չէ, որ երեխաների հետաքրքրությունների աշխարհը լի է հազար ու մի հարցերով, և նրանք օր առաջ ձգտում են ստանալ իրենց հետաքրքրող ինչուների պատասխանները: Այդ դեպքում երբ մեծերի կողմից ստանում են խթանում և աջակցություն, նրանք ոգևորությամբ ձեռնամուխ են լինում իրենց հարցերի պատասխանները հնարավորինս շուտ ստանալու գործընթացին: Ինքնուրույն աշխատելու, մտածելու կարողությունները սովորողների մոտ պետք է ձևավորել սկսած առաջին դասարանից և աստիճանաբար զարգացնել ու հարստացնել հետագայում, հաջորդ դասարաններում:

Ինքնուրույն աշխատանքի ամենատարածված ու կարևոր ձևերից մեկը հետազոտական աշխատանքն է, որը շատ երկարաժամկետ չպետք է լինի, քանի որ երեխան շտապում է օր առաջ տեսնել իր աշխատանքի արդյունքը:

Ինքնուրույն գործունեությունն ասես մի օղակ է, որը միացնում է սովորողների խոսքն ու միտքը:

Մենք գիտակցում ենք , որ մեր սովորողների անհրաժեշտ են կրթական համընդհանուր և բազմակողմանի գիտելիքներ կյանքում իրենց կարողությունները ճիշտ դրսևորելու և հասարակության կողմից ճիշտ ընդունվելու : Երեխաների մոտ պետք է պատասխանատվության զգացում զարգացնել և կրթել այնպես որ այս կյանքում կարողանան ինքնուրույն որոշումներ կայացնել:

Ինքնուրույն գործունեության կարևոր օղակներից մեկը՝ դա ուսուցչի ճիշտ վերաբերմունքն է : Վստահել և գնահատել սովորողին, նրան հնարավորություն տալ ճիշտ ըմբռնելու իրեն ուղղված առաջադրանքը: Սովորողը պետք է իրեն վստահված, արժևորված զգա: Միայն այդ դեպքում նա կկարողանա ինքնուրույն ուղղել իր սեփական սխալները: Եվ որքան կարելի է, պետք է երեխաների ինքուրույնությանը շատ վստահել, որպեսզի իրենք գտնեն իրենց հուզող հարցերի պատասխանները:

Ուսուցիչը սկսելով իր աշխատանքը սովորողների հետ ակտիվ, ինքնուրույն գործունեության բովանդակությունը ծրագրում է առարկայի ուսումնասիրման ամբողջ ժամանակամիջոցի համար: Նպատակը ոչ միայն ինքնուրույն գործնական կարողությունների մշակումն է, որոնք անհրաժշտ են կյանքում, այլև սովորողի ակտիվ գործունեությունը առակայի ուսուցման համակարգում, ամենից առաջ նրա մտավոր դաստիարակությունը, մտքի և խոսքի զարգացումը: Մենք արդեն գիտենք, որ սովորողի ինքնուրույն գործունեության բնույթից է մեծապես կախված նրա գրագիտությունը, խոսքի դերը նրա հոգևոր կյանքում:

Ինչպես պետք է կազմակերպել սովորողի ինքնուրույն գործունեությունը, որ այն օժանդակի նրա մտավոր զարգացմանը, զարգացնի խոսքի կոլտուրան, դաստիարակի գրագիտություն:

Իմ դասերի ժամանակ նախատեսում եմ այնպիսի գործունեություն, որի ընթացքում հնարավորություն եմ տալիս սովորողների ինքնուրույն ստեղծագործելու, աշխատելու, իր կարողությունները ի հայտ բերելու:

Մենք սովորողների ինքնուրույնությունը զարգացնում ենք աստիճանաբար:

Երբ առաջին անգամ դպրոց են հաճախում մեր փոքրիկները, առաջին օրվանից դասից դաս պետք է սկսել ինքնուրույն կարողությունների զարգացումը: Պետք է հասնել այն բանին, որ աշխատանքում (դասի պրոցեսում) ծնվի սովորողների միտքը և ոչ թե ամրապնդվի դասերին ստացած գիտելիքները:

Իմ աշխատանքային փորձը ցույց է տվել, որ սովորողը կարողանում է ինքնուրույն գործել, մտածել, իր մտքերը բացահայտել ակտիվ բառապաշարով, միայն այն դեպքում, երբ հետաքրքրված է բնությամբ, տեսնում է նրա հետաքրքրությունները հափշտակված է հետաքրքիր աշխատանքով: Նրա մոտ բացահայտվում են նորանոր հարաբերություններ և փոխադարձ կապեր: Սովորողը ոչ միայն կատարում է, այլև մտածում է, դատողություններ է անում պատճառա-հետևանքային կապերի մասին: Տարեցտարի նա ավելի վստահ է լինում իր ինքնուրույն գործունեության մեջ: Նա ավելի ակտիվ դատողություններ է անում, զարգանում նրա խոսքի կուլտուրան:

Տարրական դասարաններում դիտումները երեխային անհրաժեշտ են այնպես, ինչպես արևը, օդը և խոնավությունը անհրաժեշտ են բույսին: Այստեղ դիտումները մտքի եռանդի կարևորագույն աղբյուրն են: Երեխային որքան շատ է պետք իմաստավորել և հիշել, այնքան նրան ավելի շատ է անհրաժեշտ հարաբերություններ և փոխադարձ կապեր տեսնել շրջապատող բնության մեջ: Դիտումները նպաստում են ինքնուրույն գործունեության կարողությունների զարգացմանը :

Դաստիարակելով տարրական դասարանի սովորողներին , մենք նրանց սովորեցնում ենք տեսնել անսովորը, փնտրել և բացահայտել պատճառա-հետևանքային կապերը: Անհրաժեշտ է սովորեցնել ինքնուրույն մտածել, ինքնուրույն որոշումներ կայացնել:

Եթե երեխաները փոքր տարիքից սկսած սովորում են ինքնուրույն աշխատել, ապա այդ կարողությունը դառնում է նրանց սեփականությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Դասապրոցեսում ճիշտ կազմակերպված աշխատանքները զարգացնում և ակտիվացնում են սովորողների ինքնուրույնությունը և մտածողական գործունեությունը:

Ինքնուրույն աշխատանքների արդյունավետ կազամակերպման համար ուսուցիչը հստակ պետք է պատկերացնի սովորողների զգայական

առանձնահատկություններն ու տրամաբանական ընկալման գործընթացները: Նա պետք է իմանա, թե սովորողների ինչպես են մտածում և պատկերացնում, վերլուծում ու եզրահանգումներ կատարում, համեմատում և ընդհանրացնում հասկացությունների միջոցով տրամաբանական դատողություններ և ինքնուրույն մտահանգումների հասնում: Կարողանում է նաև ձեռք բերած գիտելիքները կիրառել գործնական աշխատանքում:

Ինքնուրույն աշխատանքներ պետք է հանձնարարել դեռևս առաջին դասարանից: Այսպես, օրինակ՝ կարելի է առաջարկել, որ սովորողը պատկերի որևէ թռչուն կամ ինչ որ կենդանի: Կարևորը պետք է վստահեցնել , որ ինքը կարող է այդ աշխատանքի շուրջ ստեղծագործել, ինքնուրույն աշխատել՝ նկարել, պատմել, նունիսկ կիսվել իր ընկերոջ հետ և վերջում եզրահանգումներ անել: Այս տիպի աշխատանքներն ավելի կակտիվացնի աշակետներին և բոլորը կսկսեն ինքնուրույն աշխատել:

Բազմամյա փորձը մեզ ցույց է տվել, որ սովորողները ունեն իրականությունն ընկալելու իրենց ուրույն ձևը: Նրանց աշխարհն անկրկնելի է և մեծապես տարբերվում է մեծահասակների աշխարհից: Մեր խնդիրն է՝ կառուցել սոցիալ-մշակութային առարկայական զարգացնող միջավայր, որը երեխային թույլ կտա ի հայտ բերել ստեղծագործական կարողություններ, ինքնուրույն աշխատելու կարողություններ, իրացնել ճանաչողական-գեղագիտական և մշակութային հաղորդակցման իր պահանջները:

Գիտնականները տարբեր կերպ են ներկայացնում միջավայրի դաստիարակչական հնարավորությունը: Բարոյական ու գեղագիտական արժեքներով հագեցված միջավայրում երեխան յուրովի է վերստեղծում աշխարհը: Այն թույլ է տալիս ապրել և զարգանալ:

« Այստեղ կա ուժ և գործունեություն » (Ս. Բիբլեր)

Այսպիսով միջավայրը նպաստում է հասարակական փորձի յուրացմանն ու որակների ձեռքբերմանը, իսկ դրանք անհրաժեշտ են առօրյա կյանքում:

Միջավայրը « յուրովի է ուղղորդում երեխային » : Ըստ Ա. Ի. Լեոնտևի՝ միջավայրը նախ և առաջ այն է , ինչ ստեղծված է մարդու կողմից: «Այն մարդկային ստեղծագործություն և մշակույթ է »: [1]

Հոգեբանների տեսանկյունով՝ միջավայրն անձի ստեղծագործական ինքնազարգացման գործընթաց և արդյունք է: Երեխայի համակողմանի զարգացումը չի կարող իրականանալ միայն նրա մանկական աշխարհի ներսում: Դրա համար անհրաժեշտ է երեխային դուրս բերել « մեծ աշխարհ» , որը մեծահասակների աշխարհն է: Անհնար է խոսել երեխայի ներդաշնակ զարգացման մասին, եթե նրան շրջապատող միջավայրը չափազանց անհրապույր և պարզունակ է, և երեխան այնտեղ փոխգործունեության հնարավորություն չունի:

[1] Ա. Ս. Մուսայելյան «Նախաշավիղ 7» 2013թ.,էջ 25

Ուստի, սովորողների ինքնուրույն կարողությունները կարելի է զարգացնել ավագ նախադպրդցական տարիքից: Այդ ժամանակ էլ նրանց առջև բացվում է աշխարհն իր ամբողջ դժվարություններով: Նա հասկանում է, որ ինքը վստահված անձ է, որ կարող է ունենալ հարուստ պատկերացումներ, կարող է երևակայել, ստեղծագործել, պատկերել իր զայրույթն ու ուրախությունը: Նա կարող է ինքնուրույն արտահայտվել:

« Յուրաքանչյուր երեխա մի առանձին աշխարհ է՝ իր վարքագծով և օրենքների ժողովածուով: Մեր ՝ մեծահասակներիս հիմնական խնդիրն է՝ օգնել երեխաներին՝ գտնելու իրենց աշխարհում և աշխարհն իրենց մեջ » : (Ա. Մակարենկո)[2]

Զարգացնող միջավայրի դերը երեխայի ինքնուրույն ստեղծագործական գործունեության կատարելագործման ուղղությամբ բացահայտելու համար հենց առաջին է դասարանից կարելի անցկացնել տարբեր պարապմունքներ՝ կիրառելով ժամանակակից ինտերակատիվ մեթոդներ(բանավեճ, խմբային աշխատանք, խաղային իրադրությունների ստեղծում և այլն):

Երբ ուսուցումը համագործակցային է սովորողի մոտ դրսևորվում է ինքնուրուն աշխատելու ձգտում: Նրանք աշխատում են զույգերով, փոքրիկ խմբերով և ցանկանում են իրենց մտքում ծնված նոր մտքերը կիսել ընկերների հետ : Այլ կերպ նրանք սովորեցնում են միմյանց և սովորում իրարից: Այս գործընթացը մեթոդապես ճիշտ կազմակերպելու դեպքում միահյուսված կիրականացվեն ստեղծագործական աշխատելու նաև ինքնուրույն ունակություն, ստեղծագործական մտածողության և դրա հիմքերի ամրապնդման այնպիսի հնարներ, ինչպիսիք են արագությունը, ճկունությունը և ինքնատիպությունը:

Նման տիպի աշխատանքներ կատարելիս անհրաժեշտ է.

ա/ Ստեղծել միջավայր, ուր թե՝ ուսուցիչը, թե՝ սովորողները մտածում են:

[2] Բ. Ա. Սուխոմլինսկի « Խորհուրդներ ուսուցչին » գիրք, էջ 45

բ/ Սովորողներին տրամադրել իմաստավորված ուսումնական փորձառության ձեռք բերման պայմաններ:

գ/ Վերացնել ստեղծագործական և ինքնուրույն աշխատանքների դրսևորումները խոչընդոտող ներքին արգելքները:

դ/ Զարգացնել սովորողի՝ շրջապատն ընկալելու ունակությունը, հղկել նրա նրբանկատությունը:

ե/Ընդլայնել գիտելիքների պաշարը:

Շատ կարևոր է երեխաներին սովորեցնել այն աղբյուրները, որտեղից կարելի է տեղեկատվություն ստանալ, կարելի է հարցեր ուղղել մեծահասակներին, դասագրքերում, օգտվել համակարգչից, կատարել փորձեր և դիտարկումներ:

Նախընտրելի է առաջին դասարանում հանձնարարել հետևյալ բնույթի առաջադրանքներ.

Հորինի՛ր կամ գրի՛ր

ա/Ներկայացրու քո / մայրիկի, հայրիկի եղբորդ/ անվան պատմությունը.

բ/ քո բնակավայրի անվան պատմությունը.

գ/ նկարիր քո սիրած ծաղիկը և տեղեկություններ նրա մասին.

դ/Ո՞ր կենդանիներն են ձմռանը քուն մտնող:

Պատասխանները կարող են լինել բանավոր, նկարների, գծապատկերների, հենքային բառերի տեսքով:

Երկրորդ դասարանում կարելի է ձևավորել պրոբլեմները տեսնելը և դրանք յուրովի լուծելու ունակություն. Երեխաները պետք է կարողանան կարծիք հայտնել պրոբլեմի վերաբերյալ, կամ կարծիքը հայտնել պրոբլեմի վերաբերյալ կամ փոխել կարծիքը: Պահանջել, որ տրված օբյեկտին նայեն բազմակողմանի, աշխատել տեսնել այն, ինչ չեն նկատել առաջին հայացքից:

Օրինակ

Ձմեռ էր: Տեղում էր ձյունը:

Ձյան փաթիլներն հանդարտ, օդում պարելով ցած էին իջնում:

Փողոցում…

Շարունակիր պատմությունը.

Ինչպե՞ս կարձագանքես առաջին ձյանը, եթե

- ✓ Խաղում ես բակում:
- ✓ Դու բակ մաքրող ես:
- ✓ Դու վարորդ ես:

2. Հնչում են պատասխաններ և երեխաներից պահանջվում է լսել և գուշակել անհրաժեշտ հարցերը:

- ✓ Ո՞րն է քո ամենասիրելի կենդանին, պատմիր նրա մասին:
- ✓ Ինչո՞վ է տարբերվում աշունը տարվա մյուս եղանակներից:
- ✓ Որտե՞ղ է գտնվում ձեր բնակավայրը:
- ✓ Ինչպե՞ս կարող եք օգնել ձմեռող թռչուններին:
- ✓ Տարվա ո՞ր եղանակին է ծաղկում ձնծաղիկը:

Այս դասարաններում կատարվող ինքնուրույն աշխատանքները կարելի է կատարելագործել 3-րդ և 4-րդ դասարաններում, այսինքն ձևավորել սովորողների ուսումնահետազոտական գործունեությունն առավել կատարյալ ձևով: Այս դասարաններում խրախուսվում են հատկապես անհատական աշխատանքները: Երեխան պետք է լրջորեն մոտենա իրեն տրված առաջադրանքներին:

Թեման երեխայի համար պետք է լինի հետաքրքիր, ինքնատիպ և անակնկալներ պարունակող:

Այն պետք է համապատասխանի երեխայի տարիքային առանձնահատկություններին:

Երեխան պետք է ընկալի հիմնահարցը և ներթափանցի դրա մեջ:

Ուսուցիչը պարտավոր է ճիշտ պլանավորել իր աշխատանքը և օգնել սովորողներին հաղթահարելու տեխնիկական դժվարությունները, ապահովել աշխատանքային խմբերի կապը նաև արտաքին աշխարհի հետ: Բավականին դժվար է նյութերի հավաքագրումն ու տվյալների շարք ստեղծելը: Նյութերը կարելի է հավաքել քարտերի տեսքով կամ գրառել առանձին մատյանում: Երեխան մտովի պետք է տեսնի իր աշխատանքի արդյունքը և կարողանա այն իրականություն դարձնել՝ զարգացնելով իր ստեղծագործական կարողությունները:

Եվ այսպես, կրտսեր դպրոցական տարիքից սկսած սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել ինքնուրույն աշխատել:

Ուսուցիչը պետք է հետամուտ լինի , որ ուսումնառության տարիներին սովորողների ձեռք բերած գիտելիքները լինեն միջոց՝ համապատասխան կարողությունների և հմտությունների ձևավորման և զարգացման համար, որպեսզի արդյունքում ունենանք համագործակցող, տրամաբանող առողջ բանավեճի պատրաստ, իր մտքերն ազատ արտահայտող, սեփական կարծիքն ունեցող անձ, անձ-քաղաքացի, համակողմանի զարգացած պատասխանատու իր կատարած արարքների համար:

Ուստի, մեր նպատակն է դաստիարակել այնպիսի քաղաքացի, որ նա կարողանա ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, ունենա ակտիվ ստեղծագործական ինքնուրույն մտածողություն:

ՀՀ հանրակրթական պետական կրթակարգում շեշտված է « Անհատի ստեղծագործական ունակությունների դրսևորման, ինքնարժևորման և ինքնարտահայտման, ինչպես նաև նրա պահանջմունքների բավարման և բարեկեցության ապահովման համար բարենպաստ կրթական միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պարտադիր է»:

Ես համաձայն եմ դրա հետ: Մեր օրերում կրթական համակարգում լուրջ փոփոխություններ են լինում: Նոր հազարամյակը մարդկության առջև նոր խնդիրներ է դնում, որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում:

Գիտելիքներից բացի սովորողին անհրաժեշտ է տալ նաև կիրառելու իրական կարողություններ և հմտություններ՝ հմտուրյունների ձևավորման և զարգացման համար, որպեսզի արդյունքում ունենանք համագործակցող, տրամաբանող առողջ բանավեճի պատրաստ, իր մտքերն ազատ արտահայտող սեփական կարծիքն ունեցող անձ, քաղաքացի համակողմանի զարգացած պատասխանատու իր կատարած արարքների համար:

Ուստի մեր նպատակն է դաստիարակել այնպիսի քաղաքացի, որ նա կարողանա ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, ունենա ակտիվ ստեղծագործական ինքնուրույն մտածողություն:

ՀՀ հանրակրթական պետական կրթակարգում շեշտված է «Անհատի ստեղծագործական ունակությունների դրսևորման, ինքնարժևորման և ինքնարտահայտման, ինչպես նաև նրա պահանջմունքների բավարարման և բարեկեցության ապահովման համար բարենպաստ կրթական միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պարտադիր է»:[3]

[3] « Նախաշավիղ 1» 2003թ.,էջ 12

Եզրակացություն

Այսպիսով, մեր նպատակն է դաստիարակել այնպիսի քաղաքացի, որ նա կարողանա ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ, ունենա ակտիվ ստեղծագործական ինքնուրույն մտածողություն:

Ես վստահ եմ, որ մեր օրերում կրթական համակարգում լուրջ փոփոխություններ են կատարվել: Նոր հազարամյակը մարդկության առաջ նոր խնդիրներ է դնում, որոնք հնարավոր կլինի լուծել աճող սերնդին որակապես նոր կրթություն տալու դեպքում: Գիտելիքներից բացի սովորողներին անհրաժեշտ է տալ կիրառելու իրական կարողություններ ու հմտություններ՝ և ընդգրկելով նրան ճանաչողական գործունեության մեջ ստեղծագործական միտք ձևավորել, ուղղորդել նրա ներքին ուժերն ու հնարավորությունները:

Իսկ մենք՝ մանկավարժներս, պարտավոր ենք դա անելու, և ես համոզված եմ ,որ մատաղ սերնդի դաստիարակության գործում մենք բոլորս բարեխիղճ ենք և սիրով ու հոգատարությամբ ենք կատարում մեր սուրբ գործը:

Օգտագործված գրականություն

1. Ա. Ս. Մուսայելյան «Նախաշավիղ 7» 2013թ.

2. Ա. Գ. Ռադով « Ինչ վստահեմ երեխաներին » գիրք

3. Բ. Ա. Սուխոմլինսկի « Խորհուրդներ ուսուցչին » գիրք

4. « Նախաշավիղ 1» 2003թ.

5. « Նախալավիշ 2» 2010թ.